Խորհուրդների Ղեկավարություն
Անդամ Միջազգային ՀԿ

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

Զեկույց

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման քննությունների վերաբերյալ. Օրենսդրական կարգավորումներ և պրակտիկա

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Դիանա Հարությունյանը, Հասմիկ Հարությունյանը, Արաքս Մելքոնյանը: Դատավորների թեկնածուների հատուկ կարգով որակավորման ստուգումների դիտորդությունն իրականացրել է Դիանա Հարությունյանը: Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

1. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ 8

1.1 ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության վերաբերյալ ուսումնասիրություն. 8

1.2 Դատական օրենսգրքում նախատեսված փոփոխությունների ընդունման գործընթացը. 10

1.3 Հատուկ կարգով որակավորման ստուգման օրենսդրական կարգավորումները և էությունը 13

2. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ..... 17

2.1 Ընդհանուր տեղեկություններ օրենսդրական կարգավորման վերաբերյալ..... 17

2.2 Գրավոր քննություն 18

2.3 Որակավորման ստուգման գործընթացում հոգեբանական թեստավորման փուլի և հարցազրույցի փուլին հոգեբանների ներգրավվածության բացառում 22

2.4 Հարցազրույց..... 25

3. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ..... 26

3.1 Ընդհանուր տեղեկություններ գրավոր քննության վերաբերյալ 26

3.2 Գրավոր քննության արդյունքների հրապարակումը..... 31

4.ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 34

4.1 Ընդհանուր տեղեկությունների հարցազրույցի փուլի վերաբերյալ..... 34
4.2 Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատումը..... 36
4.3 Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն..... 37
5. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 40
6. ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ..... 43
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ..... 44
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային Ժողով
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԻՊԱՍ	Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ Դատական օրենսգիրք)՝ մինչ 2022 թվականի դեկտեմբերի 23-ը գործող կարգավորումներով՝ ՀՀ-ում գործում էր դատավորների թեկնածուների որակավորման քննության ընդհանուր կարգը, ինչը ընդգրկում էր գրավոր քննություն, որին հաջորդում էր հոգեբանական թեստավորումը, այնուհետև՝ հարցազրույցի փուլը:[1] Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուները ուսումնառություն են անցնում Արդարադատության ակադեմիայում (այսուհետ Ակադեմիա)՝ առնվազն յոթ ամիս, բայց ոչ ավելի, քան 10 ամիս ժամանակահատվածով:[2]

2022 թվականին Արդարադատության նախարարության կողմից շրջանառության է դրվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծը, որը հետագայում ԱԺ-ում ենթարկվել է էական լրացումների, այդ թվում՝ ներառելով ամբողջությամբ նոր դրույթներ, ներառյալ՝ դատավորների թեկնածուների ցուցակի որակավորման ստուգման հատուկ կարգով համալրման վերաբերյալ, որոնք լրացուցիչ գործիքակազմ պետք է ծառայեին գործող կարգավորմանը զուգընթաց:

Նախագիծն ընդունվել է առանց պատշաճ հանրային քննարկումների անցկացման, ինչպես նաև նպատակահարմարության ու արդյունավետության գնահատման: Հատուկ կարգով որակավորման քննության անցկացումը 2023 թվականից դրվել է կիրառության մեջ, որն իր հերթին վեր է հանել ոչ միայն օրենսդրական, այլև գործնական մի շարք խնդիրներ: Մասնավորապես, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության (հետայսու տեքստում՝ ԻՊԱՍ կամ Կազմակերպություն) կողմից արձանագրված խնդիրներն առնչվում են ինչպես դեռևս նախագծի հանրային քննարկումների հետ կապված խնդիրներին, այնպես էլ արդեն հետագայում վեր հանված՝ Ակադեմիայում ուսումնառության բացառմանը, հոգեբանական թեստավորման փուլի վերացմանը, ինչպես նաև դատավորների որակավորման քննությունների հայցազրույցի փուլին հոգեբանների ներգրավվածության բացառմանը:

---

[1] Տե՛ս Դատական օրենսգիրք, հոդված 108:

[2] Տե՛ս Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենք, հոդված 22-րդ հոդվածի 4-րդ մաս:

Վերը նշված խնդիրները սույն զեկույցի շրջանակներում ենթարկվել են համապարփակ վերլուծության և՛ նախկին, և՛ ներկա կարգավորումների համադրությամբ և ուսումնասիրությամբ, որի արդյունքում ԻՊԱՍ-ի կողմից մշակվել են նաև համապատասխան առաջարկություններ՝ ուղղված ինչպես գործադիր (ՀՀ արդարադատության նախարարություն) այնպես էլ դատական իշխանության (Բարձրագույն դատական խորհուրդ) մարմիններին՝ դատավորների թեկնածուների որակավորման քննություններին վերաբերող օրենսդրական և պրակտիկ դաշտը բարելավելու վերաբերյալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դատավորների ընտրության և նշանակման գործընթացի վերաբերյալ պրակտիկ տվյալներ ստանալու նպատակով Կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով դիտարկվել է նաև Բարձրագույն դատական խորհրդում (հետայսու՝ նաև Խորհուրդ կամ ԲԴԽ) դատավորների ընտրության գործընթացը: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տեղեկությունների հավաքագրման և վերլուծության տարբեր մեթոդներ.

Փաստաթղթերի ուսումնասիրություն. ուսումնասիրվել են ներպետական իրավական ակտերը, որոնց շարքում կենտրոնական դեր են ունեցել՝ ՀՀ Դատական օրենսգիրքը և ԲԴԽ համապատասխան որոշումներն ու կարգերը, Դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերը և ընդունված օրենքը:

Դատավորների թեկնածուների որակավորման քննությունների մշտադիտարկում. Կազմակերպության կողմից իրականացվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից հայտարարված մրցույթների դիտորդություն: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են 2023թ.-ի փետրվարից-օգոստոս ամիսների ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի քրեական, քաղաքացիական, ինչպես նաև մասնագիտացված դատարանի՝ վարչական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման ստուգումները՝ գրավոր քննությունները, ինչպես նաև հարցազրույցների փուլերը: Կազմակերպության կողմից դիտարկվել են հատուկ կարգով թվով 7 որակավորման ստուգումներ:

Որակավորման քննություններին մշտադիտարկում իրականացնելու համար Կազմակերպությունը Դատական օրենսգրքով սահմանված կարգով նախապես դիմում է ներկայացրել Դատական դեպարտամենտին (հետայսու՝ Դեպարտամենտ), ինչի հիման վրա հնարավոր է դարձել ներկա գտնվել որակավորման քննություններին և խորքային տվյալներ ստանալ դրանց ընթացքի վերաբերյալ։

Մասնավորապես, Կազմակերպության կողմից դիտարկվել են քրեական մասնագիտացման բաժնի գրավոր քննությունները, որոնք տեղի են ունեցել, համապատասխանաբար 2023 թվականի փետրվարի 2-ին, ապա 2023 թվականի մարտի 13-ին, ինչպես նաև 2023 թվականի ապրիլի 13-ին։

Կազմակերպության կողմից դիտարկվել են նաև քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժինների գրավոր քննությունները, որոնք տեղի են ունեցել, համապատասխանաբար, 2023 թվականի մարտի 10-ին, նույն թվականի ապրիլի 14-ին, նույն թվականի հունիսի 28-ին, իսկ վարչական մասնագիտացման բաժնի գրավոր քննությունը՝ նույն թվականի մարտի 9-ին։

Պաշտոնական կայքերի, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) կայքերի ուսումնասիրություն. Կազմակերպության կողմից ուսումնասիրվել են ՀՀ Դատական իշխանության պաշտոնական կայքէջը, ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջը (հետայսու տեքստում նաև՝ ԱՆ), ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջը (հետայսու տեքստում նաև՝ ԱԺ), Հայաստանի Իրավական Տեղեկատվական Համակարգ (arlis.am), իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը (e-draft), ուսումնասիրվել են պաշտոնատար անձանց կողմից լրատվամիջոցներին տրամադրված հարցազրույցները և այլն՝ վերաբերելի տվյալների դուրս բերմամբ։ Կազմակերպության կողմից իրականացվել է նաև Խորհրդի կողմից դատավորների թեկնածուների ցուցակներում ներառված անձանց վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն, մասնավորապես ԲԴԽ կայքում ներկայացված ինքնակենսագրական տվյալների՝ դատավորների թեկնածուների վերջին աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկատվությունները, ինչպես նաև թեկնածուների տարիքային շեմի վերաբերյալ ուսումնասիրություններ։

Տեղեկատվության հարցումներ. առանձին հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու նպատակով Կազմակերպության կողմից ներկայացվել են տեղեկություն ստանալու վերաբերյալ հարցումներ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (հետայսու՝ ԿԿՀ կամ Հանձնաժողով), Դատական Դեպարտամենտին, ինչպես նաև Արդարադատության Ակադեմիային։

Հարցազրույց / քննարկումներ. Կազմակերպությունը հարցազրույց-քննարկում է ունեցել Բարձրագույն դատական խորհրդի երկու անդամների հետ: Նախատեսված է եղել նաև հարցազրույց-քննարկում ունենալ հատուկ կարգով ընտրված կամ նշանակված դատավորների թեկնածուների հետ, ինչի նպատակով կազմվել է հարցաթերթ՝ վերհանված որոշ խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով։

Դատավորների թեկնածուներին առաջարկվել է ունենալ հարցազրույց-քննարկում կամ էլեկտրոնային եղանակով լրացնել հարցաթերթը, որով ստացված պատասխանները վերլուծվելու էին ընդհանրական կերպով՝ երաշխավորելով հեղինակի անանունությունը, սակայն դատավորների կողմից չի ստացվել որևէ պատասխան։

1. ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1.1 ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության վերաբերյալ ուսումնասիրություն**.**

2019թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել էր Հայաստանի Հանրապետության ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ-ի ռազմավարությունը։ [3] Ռազմավարությունն ուժը կորցրած է ճանաչվել 2022թ.-ի հուլիսի 21-ին՝ նախատեսվածից մեկ տարի շուտ՝ ՀՀ կառավարության 2022թ.-ի հուլիսի 21-ի N1133-Լ որոշմամբ [4] ՀՀ կառավարության նույն որոշմամբ [5] հաստատվել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ.-ի ռազմավարությունը և ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիրը)։

Որպես ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ.-ի ռազմավարության առանձին ուղղություն սահմանվել էր դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի բարելավումը։ Այս ուղղության շրջանակներում նախատեսված էր՝ «2020 թվականին Դատական օրենսգրքում կատարված փոփոխություններով մի շարք նորամուծություններ մտցնել դատավորների ընտրության և նշանակման գործընթացում, այդ թվում՝ որակավորման ստուգման արդյունքների բողոքարկման, ինչպես նաև հարցազրույցի փուլում գրավոր քննության արդյունքները հաշվի առնելու կարգավորումների մասով։ Այնուամենայնիվ, դատավորների ընտրության և նշանակման գործընթացի նկատմամբ վստահության, ինչպես նաև գործընթացի օբյեկտիվության բարձրացման տեսանկյունից կարևոր է նաև այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել գործընթացի գրավոր և բանավոր փուլերի արդյունքների համադրումը՝ գնահատման միասնական համակարգի միջոցով։

Նախատեսվել է նաև վերանայել դատավորների ներգրավման օրենսդրական կարգը, ինչը հնարավորություն կտա տարբեր բարձր մասնագիտական պահանջների բավարարող անձանց համար սահմանել առավել ճկուն ընթացակարգեր՝ ապահովելով դատական համակարգի գրավչության բարձրացումը, ինչպես նաև ավելի մեծ թվով պրոֆեսիոնալ անձանցով համալրումը։

---

3 Տե՛ս ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ-ի ռազմավարությունը։ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135487

4 Տե՛ս ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ-ի ռազմավարությունը։ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582

5 Տե՛ս ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ-ի ռազմավարությունը։ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582

Որպես հիմնավորում նշվում է, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն նույնպես կարևորում է դատական նշանակումների իրականացումը օրենքով նախատեսված օբյեկտիվ չափանիշների հիման վրա [6] ՝ հաշվի առնելով անձի որակավորումը, բարեվարքությունը, կարողությունները և արդյունավետությունը[7]:

Չնայած նախագծի հեղինակները դրա հիմնավորման մեջ ուղղակիորեն չեն վկայակոչել, թե ռազմավարության կոնկրետ որ միջոցառումից/գործողությունից է բխում նախագիծը, այնուամենայնիվ, դրա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագիծն առնչվում է ռազմավարության՝ դատավորների ներգրավվման կարգի վերաբերյալ դրույթներին:

1.2 Դատական օրենսգրքում նախատեսված փոփոխությունների ընդունման գործընթացը.

Այսպես, 2022 թվականի դեկտեմբերի 23-ին Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ Դատական օրենսգրքում կատարվեցին լրացումներ և փոփոխություններ [8] , որոնք ըստ Կազմակերպության, խնդրահարույց են և մտահոգիչ մի շարք պատճառներով.

Այսպես, 2022 թվականի նոյեմբերի 24-ին տեղի ունեցած Կառավարության նիստին ՀՀ Արդարադատության նախարարության կողմից նախագիծ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[9] : Նախագծով Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը վերաբերել է բացառապես հակակոռուպցիոն քաղաքացիական և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ

---

[6] Տե՛ս Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարական:
https://www.icj.org/wpcontent/uploads/2014/06/CMRec201012E.pdf

[7] Տե՛ս Դատավորների աշխատանքի գնահատման, արդարադատության որակի և դատականանկախության նկատմաբ հարգանքի վերաբերյալ Եվրոպական դատավորներիխորհրդատվական խորհրդի թիվ 17 կարծիք, 2014:
https://www.ejtn.eu/Documents/About%20EJTN/RoL%20Project/RoL_2019_02_Brussels-/CCJE%20Opinion%20no%2017%20on%20the%20evaluation%20of%20judges%60%20work,%20quality%20of%20justice%20and%20respect%20for%20judicial%20independence.pdf

[8] Տե՛ս «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը:
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=13942&Reading=0

[9] Տե՛ս Կառավարության նիստում քննարկվող նախագիծը:
https://www.e-gov.am/sessions/archive/2022/11/24/
https://www.e-gov.am/gov-decrees/item/39363/

գործերով կայացված դատական ակտերի վերաքննության կազմակերպմանը մասնագիտացված՝ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից և դրան վերաբերող այլ կառուցակարգերին, և որևէ դրույթ չի պարունակել դատավորների թեկնածուների հատուկ կարգով որակավորման ստուգման մասին։

Նախագիծը հանրային քննարկման ներկայացված տարբերակով [10] հաստատվել է Կառավարության կողմից և ուղարկվել Ազգային ժողով[11] : Սակայն մինչև նախագծի առաջին ընթերցումը՝ ԱԺ պետահիրավական հանձնաժողովի արտահերթ նիստում, ԱԺ Քաղաքացիական պայմանագիր խմբակցության պատգամավորներից մեկի կողմից առաջարկություն է ներկայացվել նախագիծը՝ դատավորների որակավորման ստուգման հատուկ կարգի վերաբերյալ դրույթով լրացնելու մասին, որն ընդունելի է համարվել նախագծի հեղինակի՝ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից։ Արդյունքում, նախագիծը լրացվել է ամբողջությամբ նոր հոդվածով, որը չի ներկայացվել հանրային քննարկման։ Միաժամանակ, արտահերթ նիստի ընթացքում, Պետահիրավական հանձնաժողովի նախագահը նշել է, որ ԲԴԽ-ն նախաձեռնել է մի շարք քննարկումներ՝ կապված դատահիրավական բարեփոխումների իրականացման հետ, այս հարցը քննարկվել է դատական իշխանության ներկայացուցիչների հետ և հաշվի են առնվել տարբեր կողմ և դեմ կարծիքներ, և նախագծի վերաբերյալ առաջարկների հրատապ ներառումը պայմանավորված է դատարանների ծանրաբեռնվածությամբ և գործերի քանակով։ Արդյունքում լրամշակված նախագիծը դրվել է քննարկման Պետահիրավական հանձնաժողովի նիստում, որին տրվել է դրական եզրակացություն։ Այսպիսով, 2022 թվականի դեկտեմբերի 16-ին [12] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը Ազգային ժողովում ներառվել է նստաշրջանի օրակարգ և նույն օրը ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը, որում ներառվել է հատուկ կարգով որակավորման քննությունների վերաբերյալ դրույթը։ Նախագիծը

[10] Տե՛ս նաև իդրաֆթ տեղեկատվական հարթակում ներկայացված նախագիծը։
https://www.e-draft.am/projects/4767
[11] Տե՛ս Ազգային Ժողովում օրակարգում ընդգրկված նախագիծը։
http://www.parliament.am/draft_history.php?id=14017
[12] Տես՝ Ազգային Ժողովի պետահիրավական հարցերով հանձնաժողովի արտահերթ նիստը։
http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=17936&year=2022&month=12&day=16&lang=arm

լրամշակված տարբերակով 2022 թվականի դեկտեմբերի 16-ին[13]՝ 59 կողմ, 6 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ առաջին ընթերցմամբ ընդունվել է ԱԺ-ի կողմից։

Առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում՝ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին, ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում կրկին քննարկվել է նշված օրենքների նախագծերի փաթեթը՝ հատուկ կարգի վերաբերյալ[14]։ Նիստի ընթացքում, պարզաբանելով առաջարկվող փոփոխությունները՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչը նշել է, որ փոփոխությամբ նախատեսվել է «EXTERN» քննության՝ «BAR exam»-ի տարբերակ։ Փոփոխությունը հիմնավորվել է նրանով, որ դատավորների թեկնածուները, հանձնելով պարզեցված ընթացակարգով, սակայն իր էությամբ բարդ քննությունը, համապատասխան շեմը հաղթահարելու պարագայում կունենան հնարավորություն անմիջապես նշանակվել դատավորի պաշտոնում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսումնառության կուրսն անցնելու։ Անդրադառնալով մեխանիզմներին, ՀՀ ԱՆ ներկայացուցիչը նշել է, որ քննությամբ լինելու են այնպիսի հարցադրումներ, որոնք իրենց մեջ ներառելու են այն բոլոր խնդիրները, որոնք պետք է լուծի դատավորի թեկնածուն։ ԱԺ Հանձնաժողովում քննարկման ընթացքում Հանձնաժողովի նախագահը իր մտավախությունն է ներկայացրել այն մասին, որ Հատուկ կարգով որակավորման ստուգումը, լինելով լրացուցիչ գործիքակազմ՝ բացառություն, հաճախ կարող է կիրառվել որպես հիմնական գործիքակազմ։[15]

Սրանք, ըստ էության, միակ քննարկումներն են եղել, որոնք նախորդել են Ազգային Ժողովի պլենար նիստում նախագծի փաթեթի երկրորդ ընթերցմամբ ընդունմանը։ Արդյունքում, նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 23-ին[16]՝ 67 կողմ, 33 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ։

---

[13] Տես՝ 16.12.22 թվականի Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի նիստը։
https://www.youtube.com/watch?v=14NCY4HlfCs

[14] Տես՝ Ազգային Ժողովի պետաիրավական հարցերով հանձնաժողովի արտահերթ նիստը։
http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=17972&year=2022&month=12&day=22&lang=arm&fbclid=IwAR0KfEiXEdSYdc5b-6ylroH8_9pv2xNShwqSQ_k4FVDz9nMVWvKRvtlfIDI

[15] Տե՛ս սկզբնաղբյուրը։
http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=17972&year=2022&month=12&day=22&lang=arm&fbclid=IwAR2oER_yiRnaimE9ZMeKtjdPNCVUILXxEupSRO35hROomw1T-OmUWlf5d00

[16] Տե՛ս 23.12.22 թվականի Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի նիստը։
https://www.youtube.com/watch?v=KicUHilgAOc

1.3 Հատուկ կարգով որակավորման ստուգման օրենսդրական կարգավորումները և էությունը

Դատական օրենսգրքի փոփոխված և լրացված տարբերակում Դատական օրենսգիրքը լրացվել է 110.1 հոդվածով՝ նախատեսելով հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելու և դատավորների թեկնածուների ցուցակում հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին ընդգրկելու հնարավորությունը։

Մասնավորապես, Դատական օրենսգրքի 110.1 հոդվածի համաձայն՝

1. Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան բաժինը լրացնելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է որոշում կայացնել հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելու անհրաժեշտության մասին, որի դեպքում <u>անձն ընդգրկվում է դատավորների թեկնածուների ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու:</u>

2. Հատուկ կարգով որակավորման ստուգման նկատմամբ («mutatis mutandis») կիրառվում են սույն օրենսգրքի 95-109-րդ հոդվածներով սահմանված կանոններն այնքանով, որքանով կիրառելի են, և եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով:

3. Հատուկ կարգով որակավորման ստուգման կազմակերպման և իրականացման ձևի ու կարգի, կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ նվազագույն պահանջների և հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացման այլ առանձնահատկություններ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանելիս պետք է ապահովեն որակավորման ստուգման էական բարդությունը:

4. Գրավոր քննության բողոքարկման արդյունքները հրապարակելուց, իսկ բողոքներ չլինելու դեպքում բողոքարկման ժամկետը լրանալուց հետո Դատական դեպարտամենտը գրավոր քննության հանրագումարային արդյունքներով անհրաժեշտ միավորներ հավաքած անձանց ցուցակը ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդ հարցազրույց անցկացնելու նպատակով։

5. Դատական դեպարտամենտը սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ցուցակը Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու հետ միաժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում ցուցակում ներառված անձանց

բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

6. Հարցազրույցի արդյունքներով ընտրված թեկնածուներին Բարձրագույն դատական խորհուրդը ներառում է դատավորների թեկնածուների ցուցակում՝ ըստ համապատասխան մասնագիտացումների»:

Այսպիսով, հատուկ կարգով որակավորման ստուգման պայմաններում նախատեսվում է դատավորի թեկնածուներին ընդգրկել համապատասխան մասնագիտացման ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու: Արդարադատության ակադեմիայում կրթությունը, սակայն, ապահովում է նոր դատավորների առավել բարձր մասնագիտական պատրաստությունը, ձեռք բերված գործնական հմտությունները, որոնք էական են դատավորի պաշտոնում նշանակված անձի գործունեության համար: Թեև օրենքով նախատեսվել է հատուկ կարգով որակավորման ստուգման էական բարդությունը, սակայն Ակադեմիայում կրթություն ստանալու անհրաժեշտությունը նման կերպ չի բացառվում և այն շրջանցելը որևէ ողջամիտ բացատրություն չի ստացել: Արդարադատության ակադեմիայում թեկնածուները ձեռք են բերում ոչ միայն տեսական իրավաբանական գիտելիքներ, այլև գործնական հմտություններ, օրինակ՝ էթիկան, հաղորդակցման հմտությունները, դատական ակտ կայացնելու կարողությունները և այլն: Այս հմտությունները վճռորոշ են արդարադատության արդյունավետ իրականացման համար:

Անհրաժեշտ է փաստել, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) կարծիքով նորընտիր դատավորները պետք է անցնեն նախնական ուսուցում՝ հաշվի առնելով, որ դատավորի գործառույթների իրականացումը նոր մասնագիտություն է անձի համար և ներառում է կոնկրետ մոտեցումներ շատ ոլորտներում, հատկապես դատավորի մասնագիտական էթիկայի, դատական ընթացակարգերի, դատավարությանը ներգրավված այլ անձանց հետ հարաբերությունների առնչությամբ: Միաժամանակ, ԵԴԽԽ-ի կարծիքով կարևոր է հաշվի առնել դատավորների ընտրության մեթոդների առանձնահատկությունները, որպեսզի դատավորների նախնական ուսուցման ծրագրերը թիրախային և հարմարեցված լինեն թեկնածուների կարիքներին, մասնավորապես փորձառու իրավաբանները կարող են պատրաստվել նոր մասնագիտության կարիքներով պահանջվող հարցերում: Հետևաբար,

պարտադիր նախնական պատրաստումները պետք է համապատասխանեն թեկնածուների մասնագիտական փորձառությանը[17]:

Եվրոպայի խորհրդի 46 պետություններից 42-ում դատավորների թեկնածուները կամ նորընտիր դատավորներն անցնում են պարտադիր նախնական մասնագիտական պատրաստություն: Պետությունները տարբեր մոտեցումներ ունեն նախնական ուսուցման բովանդակության վերաբերյալ: Այն երկրներում, որտեղ դատավորներն ընտրվում են երկար մասնագիտական փորձառություն ունեցող իրավաբան մասնագետների շարքից, նախնական ուսուցումը ներառում է կազմակերպչական և վարչարարության կանոնների ուսուցումը: Սակայն այն երկրներում, որտեղ դատավոր ընտրվում են երիտասարդ կադրեր, ովքեր հաղթահարել են համապատասխան ընտրության քննությունները, նախնական ուսուցումը պետք է ներառի իրավական գիտելիքների, ինչպես նաև դատարաններում պրակտիկայի իրականացումը, ինչն էական է արդարադատության որակի ապահովման համար[18]:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունում ներդրված հատուկ կարգով որակավորման ստուգման դեպքում դատավորի թեկնածուների մասնագիտական չափանիշների որևէ փոփոխություն կամ առավել բարձր չափանիշներ չի նախատեսվել: Այսպես, դատավորի թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը հայտ կարող են ներկայացնել 25-ից 60 տարեկան, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե՝

1) ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

2) Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) տիրապետում են հայերենին.

---

[17] ԵՀԽԿ Կարծիք 4 (2003) ազգայ ին ևեվրոպական մակարդակներում դատավորների նախնական և շարունակական պատրաստումների վերաբերյալ , 27 նոյ եմբերի 2003թ., https://rm.coe.int/1680747d37

[18] CEPEJ, European judicial systems: Efficiency and quality of justice, CEPEJ Studies No. 26, 2018 Edition, https://rm.coe.int/rapport-avec-couv-18-09-2018-en/16808def9c

4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն.

5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

6) առկա չեն դատավոր նշանակվելու՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները: Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը (այսուհետ՝ հավակնորդ) որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ:

Համաձայն Դատական օրենսգրքի 110.1 հոդվածի 3-րդ մասի՝ հատուկ կարգով որակավորման ստուգման կազմակերպման և իրականացման ձևի ու կարգի, կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ նվազագույն պահանջների և հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացման այլ առանձնահատկություններ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանելիս պետք է ապահովեն որակավորման ստուգման էական բարդությունը:

Ընդ որում, որակավորման գրավոր քննության իրավական խնդիրների քանակը 8-ից կրճատվել է 4-ի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննական խնդիրները եղել են շատ բարդ և նախատեսված ժամանակը բավարար չի եղել դրանք լուծելու համար:

Հաշվի առնելով նշվածը՝ Կազմակերպության կողմից հարցում է կատարվել Դատական դեպարտամենտ՝ տրամադրելու արդեն իսկ տեղի ունեցած և ավարտված հատուկ կարգով որակավորման գրավոր քննությունների քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացումների համար առաջադրանքների մեկական ամբողջական օրինակներ

(ներառյալ՝ թեստային առաջադրանքները և խնդիրները) և ընդհանուր ընթացակարգով գրավոր քննությունների՝ քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացումների առաջադրանքների մեկական ամբողջական օրինակները: Դիմումով հայցվել է տրամադրել արդեն իսկ ավարտված քննական տոմսի օրինակ՝ առանց որևէ անձնական տվյալի կամ օրենսգրքով արգելված տեղեկության վեր հանման: Դատական դեպարտամենտի ղեկավարը պատասխան գրությամբ քննական տոմսի օրինակների տրամադրումը մերժել է այն հիմնավորմամբ, որ գրավոր քննության առաջադրանքները քննություն հանձնած անձից բացի այլ անձի տրամադրելու կառուցակարգ նախատեսված չէ օրենսդրությամբ: [19] Մինչդեռ, քննական տոմսերի համեմատությունը հնարավորություն կընձեռեր վեր հանել ընդհանուր և հատուկ ընթացակարգերով որակավորման ստուգման տարբերությունները, այդ թվում՝ գնահատել հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննության բարդությունը:

2. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

2.1 Ընդհանուր տեղեկություններ օրենսդրական կարգավորման վերաբերյալ

Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի տեղեկություններ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները և վայրը: Թեկնածուների համալրումը համալրման ենթակա տեղերի քանակով իրականացվելու դեպքում հայտարարությամբ նշվում է համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների:[20]

Որակավորման ստուգումը բաղկացած է հայտի ներկայացման և ստուգման, գրավոր քննության և հարցազրույցի անցկացման փուլերից:

[19] Գրության պատասխան թիվ ԴԴ-1Ե-5699:
[20] Տե՛ս ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 95:

Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը (այսուհետ՝ հավակնորդ) որակավորման ստուգման մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում սահմանված ձևի հայտ[21]:

Եթե հայտը ներկայացված է սահմանված ժամկետի խախտմամբ կամ չի բավարարում օրենսգրքով նախատեսված պահանջներին, ապա այն մերժվում է Դատական դեպարտամենտի կողմից, ինչը հնարավոր է հավակնորդի կողմից բողոքարկվել վարչական դատարան՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հավակնորդը առանց նոր հայտ ներկայացնելու շարունակում է մասնակցել որակավորման ստուգման հերթական և հաջորդ փուլերին[22]:

2.2 Գրավոր քննություն

Գրավոր քննության բովանդակությունը

Հայտի ներկայացմանը հաջորդում է գրավոր քննության փուլը: Համաձայն Դատական օրենսգրքի 103-րդ հոդվածի՝ որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական, վարչական մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը:

Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով որակավորման գրավոր ստուգման առաջադրանքները պարունակում են թեստային, իրավական և դատավորի վարքագծի կանոնների վերաբերյալ առաջադրանքներ:

Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինների համալրման նպատակով հատուկ կարգով որակավորման գրավոր ստուգում անցկացնելու համար կազմվում է թեստերի և իրավական խնդիրների հրապարակման ոչ ենթակա շտեմարան, որտեղ ընդգրկված են 120 թեստային առաջադրանքները և 16 իրավական

[21] Տե՛ս ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 98:
[22] Տե՛ս ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 99:

խնդիրներ, որոնցից գրավոր քննությանը մասնակցող հավակնորդների համար թղթային եղանակով կազմվում է առաջադրանքի 2 տարբերակ:

Քննության թեստային առաջադրանքները պարունակում են 60 (վաթսուն) հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրներ և հակիրճ հարցերի միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու տարբերակներ, ինչպես նաև իրավական խնդիրների միջոցով առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու առաջադրանք: Յուրաքանչյուր թեստային առաջադրանքը պարունակում է մեկ հարց՝ պատասխանի հնարավոր 4 (չորս) տարբերակներով, որոնցից մեկը՝ որոշակիության պայմաններին բավարարող ճիշտ պատասխանն է: [23] Որակավորման ստուգման գրավոր քննության իրավական առաջադրանքի տարբերակը պարունակում է 8 (ութ) խնդիր յուրաքանչյուրը 1 (մեկ) հարցադրումով:

Մինչդեռ, Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի մարտի 16-ի թիվ ԲԴԽ-33—Ո-107 որոշմամբ Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի հունվարի 18-ի թիվ ԲԴԽ-5-Ո-16 և 2023 թվականի փետրվարի 2-ի թիվ ԲԴԽ-15-Ո-55 որոշումներով կատարվել է փոփոխություններ, որոնց արդյունքում, ի թիվս այլնի, սահմանվել է, որ քննության իրավական առաջադրանքի տարբերակը պարունակում է 4 խնդիր՝ յուրաքանչյուրը մեկ հարցադրմամբ:

Դեպարտամենտի կողմից ստացված պատասխան գրությամբ ներկայացվել է, որ 2023 թվականի հունվար ամսից մինչ հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում քննության 8 խնդրից բաղկացած իրավական առաջադրանքի տարբերակով 2 անգամ կազմակերպվել է դատավորների թեկնածուների ցուցակի քրեական, մեկ անգամ վարչական, մեկ անգամ քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննություն, իսկ քննության 4 խնդրից բաղկացած իրավական առաջադրանքի տարբերակով 2 անգամ կազմակերպվել է դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական, 1 անգամ՝ քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննություն:[24]

Ինչ վերաբերում է քննության իրավական հարցերին, ապա դրանք պետք է հնարավորություն տան ստուգելու հավակնորդի՝ իրավական գիտելիքները

[23] Տե՛ս ԲԴԽ-ի կողմից սահմանած համապատասխան կարգը: https://court.am/hy/decisions-single/1678

[24] Գրության պատասխան թիվ ԴԴ-1Ե-7761:

համապատասխան մասնագիտացման ոլորտում՝ ներառյալ կիրառելի սահմանադրական նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների իմացությունը և ընկալման մակարդակը, վերլուծական և մեկնաբանման՝ ներառյալ խնդրի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները վեր հանելու, դրանք կիրառելի իրավական նորմի և ներկայացված դիրքորոշումների հետ համադրելու հմտությունը, հիմնավորված և պատճառաբանված եզրակացություններ կատարելու կարողությունը, իրավաբանական գրավոր խոսքը հստակ և տրամաբանված շարադրելու ունակությունը:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձի, ինչպես նաև վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող անձի ընդգրկման առանձնահատկությունները չեն տարածվում հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելու նպատակով հայտ ներկայացրած անձանց վրա:[25]

Որակավորման գրավոր քննության գնահատման հանձնաժողովը

ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ որակավորման գրավոր քննության աշխատանքներն ստուգելու և գնահատելու նպատակով ԲԴԽ որոշմամբ ձևավորվում է համապատասխան մասնագիտացում ունեցող գնահատման հանձնաժողով: Գնահատման հանձնաժողովի կազմի մեջ մտնում են համապատասխան մասնագիտացում ունեցող հինգ դատավոր և երկու իրավաբան անդամ:

Սակայն Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-5-Ո-16 որոշմամբ սահմանվել է, որ Հատուկ կարգով որակավորման գրավոր քննության աշխատանքները ստուգելու և գնահատելու նպատակով քննություն անցկացնելու օրը՝ քննության ավարտից անմիջապես հետո, Բարձրագույն դատական խորհրդի դռնփակ նիստում վիճակահանությամբ ձևավորվում է Գնահատման հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան մասնագիտացման մեկ անդամ, Դատական դեպարտամենտի և Արդարադատության նախարարության մեկական ներկայացուցիչներ:[26]

---

[25] Տե՛ս որակավորման քննության այլ առանձնահատկությունները ԲԴԽ-5-Ո-16 և ԲԴԽ-15-Ո-55 որոշումներում:
[26] Տե՛ս ԲԴԽ-5-Ո-16 որոշումը:

Այս կարգավորումը հակասում է Դատական օրենսգրքի 104-րդ հոդվածին։ Դատավորների թեկնածուների գրավոր քննության գնահատման հանձնաժողովի կազմում չեն կարող լինել դատական դեպարտամենտի ներկայացուցիչ, ինչպես նաև գործադիր իշխանության՝ արդարադատության նախարարության ներկայացուցիչ՝ ազդեցություն ունենալով դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի վրա։ Միաժամանակ, հաշվի առնելով հատուկ կարգով դատավորների թեկնածուների որակավորման ստուգման գրավոր քննության, այդ թվում՝ իրավական խնդիրների բարդությունը և քանակը, գնահատման հանձնաժողովը չէր կարող բաղկացած լինել դատական գործունեության փորձառություն չունեցող անձանցից, այն դեպքում, երբ ընդհանուր կարգով որակավորման ստուգման գրավոր քննության գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկված են համապատասխան մասնագիտացում ունեցող հինգ դատավոր և իրավունքի համապատասխան բնագավառի երկու իրավաբան գիտնական։

Գրավոր քննության բողոքարկման ժամկետները.

Համաձայն Դատական օրենսգրքի 105.1 հոդվածի՝ գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Սակայն Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-5-Ո-16 որոշմամբ՝ սահմանվել է հնգօրյա ժամկետ, քննական աշխատանքների արդյունքների հրապարակելուց հետո։

Քննարկվող քննության արդյունքների բողոքարկման իրավունքի իրացման առնչությամբ արձանագրվել է անհամապատասխանություն, քանի որ Դատական օրենսգրքով սահմանված ժամկետը Խորհրդի կողմից չի պահպանվել՝ իր Որոշմամբ սահմանելով կարգ, որով նախատեսվում է հնգօրյա ժամկետ:

ԲԴԽ անդամների հետ հանդիպման ընթացքում, բարձրաձայնելով բողոքարկման ժամկետների հետ կապված անհամապատասխանության հարցը՝ ԲԴԽ անդամները նշել են, որ հակասություն չեն տեսնում Դատական օրենսգրքի և ԲԴԽ որոշման միջև։ Ըստ Խորհրդի անդամների՝ որոշման հիմքում ընկած է 110.1 հոդվածի 3-րդ մասը, ինչը կիրառվում է հրատապ դեպքերում։ Մասնավորապես՝ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հատուկ կարգով որակավորման ստուգման կազմակերպման և իրականացման ձևի ու կարգի, կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ նվազագույն պահանջների և հատուկ կարգով

որակավորման ստուգման անցկացման այլ առանձնահատկություններ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանելիս պետք է ապահովեն որակավորման ստուգման էական բարդությունը: Խորհուրդը նշված բողոքարկման ժամկետի փոփոխությունը դիտարկում է «այլ առանձնահատկություններ» սահմանելու համատեքստում:

Սակայն «այլ առանձնահատկություններ» բառակապակցությունը շատ լայն հասկացություն է, ուստի առկա է ռիսկ Խորհրդի կողմից յուրաքանչյուր փոփոխություն ներառելու՝ որպես սահմանված այլ առանձնահատկությունների համատեքստում: Ավելին, նման մեկնաբանությունը չի կարող հանգեցնել այնպիսի կարգավորման, որը թեկնածուի ընթացակարգային իրավունքների ապահովման համար ոչ բարենպաստ հնարավորություն կնախատեսի:

2.3 Որակավորման ստուգման գործընթացում հոգեբանական թեստավորման փուլի և հարցազրույցի փուլին հոգեբանների ներգրավվածության բացառում

Դատական օրենսգրքի վերը ներկայացված փոփոխությունների և լրացումների արդյունքում 2022 թվականին դեկտեմբերի 23-ին ՀՕ-575-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել նաև օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասը, որը նախատեսում էր հարցազրույցից առաջ՝ հինգ օրվա ընթացքում, հավակնորդների հոգեբանական թեստավորում՝ դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելու նպատակով:

Օրենսդրական փոփոխությունների հիման վրա հոգեբանական թեստավորման փուլն առհասարակ հանվել է որակավորման ստուգման գործընթացից, սակայն այդ փոփոխության առնչությամբ ևս որևէ հիմնավորում չի ներկայացվել որոշում կայացնող մարմինների կողմից:

Անդրադառնալով հոգեբանական թեստավորմանը՝ Դատական դեպարտամենտի ներկայացուցիչը նշել է[27], որ հոգեբանական թեստավորման փուլի դուրս մնալը չի ազդելու ընթացքի վրա, քանի որ հոգեբանների կարծիքը խորհրդատվական նշանակություն ուներ, իսկ փորձը ցույց է տվել, որ այն բյուջեի վրա ավելորդ ծանրաբեռնվածություն էր: Ըստ

[27] Տե՛ս Դատական դեպարտամենտի ներկայացուցչի հարցարզույցը:
https://www.facebook.com/100069327154682/videos/702234868277256

Դեպարտամենտի ներկայացուցչի ԲԴԽ-ում կազմում կան պրոֆեսիոնալ իրավաբաններ, ովքեր կարող են գնահատել անձի՝ դատավոր աշխատելու հնարավորությունը:

Կարծում ենք, որ իրավաբանները, այդ թվում՝ և ԲԴԽ անդամները չունեն հոգեբանի անհրաժեշտ մասնագիտական կարողություններ՝ պատշաճորեն գնահատելու անձի հոգեբանական հատկանիշները: Ինչպես նաև օրենսդրությամբ հոգեբանի ներկայությունը նախատեսելը եղել է նպատակային՝ ելնելով վերջինիս մասնագիտական հմտությունների և կարողությունների կարևորությունից:

Սահմանադրական դատարանը դեռևս 2017 թվականի հունիսի 20-ի իր ՍԴՈ-1374 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել, համաձայն որի՝ «…հոգեբանական թեստն ուղղված է հավակնորդների պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը (115.2-րդ հոդվածի 9-րդ մաս): Համաձայն Դատական օրենսգրքի իրավակարգավորումների՝ արդարադատության խորհրդում հարցազրույցի նպատակը հավակնորդի ոչ միայն մասնագիտական փորձառության գնահատումն է, այլ նաև նրա՝ պետաիշխանական պատասխանատվության ստանձնման համար անհրաժեշտ որոշակի անհատական հատկանիշների գնահատումը (մասնավորապես՝ 116.1-րդ հոդվածի 1-ին մաս): Սահմանադրական դատարանը գտնում է, որ առանց հոգեբանական թեստի արդյունքների Արդարադատության խորհուրդը չի կարող լիարժեք իրականացնել ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 95-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելու և Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնելու իր սահմանադրական գործառույթը…»:[28]

Հոգեբանական թեստավորման նպատակը հավակնորդի էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը, արժեքային համակարգը գնահատելն է, ինչը մասնագիտական մեթոդաբանություն և գիտելիքներ է պահանջում, և կարող է իրականացվել բացառապես հոգեբան մասնագետների կողմից:

[28] Տե՛ս Սահմանադրական դատարանի որոշումը:
https://www.concourt.am/decision/decisions/sdv-1374.pdf

Ըստ ԲԴԽ անդամների՝ հոգեբանական թեստավորման փուլը արդյունավետ չի եղել, ավելին, անհասկանալի է եղել թեկնածուների հոգեբանական ստուգման ընթացքն ու արդյունքները:

Գտնում ենք, որ հոգեբանական թեստի կիրառման առնչությամբ առկա խնդիրները ենթադրում էին այդ խնդիրների լուծում և ոչ այդ ինստիտուտի ամբողջական վերացում: Մինչդեռ որոշում կայացնողների մոտեցումը հարցի առնչությամբ այլ է եղել՝ հնարավոր բացասական հետևանքներով, ինչն առավել տեսանելի կդառնա առանց հոգեբանական ստուգման դատավորի պաշտոնը ստանձնած կադրերի որոշակի ժամանակ պաշտոնավարելուց հետո:

Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան [29] : Մինչդեռ, հոգեբան չի մասնակցել նաև դիտարկված որակավորման ստուգումների շրջանակում ԲԴԽ կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների հարցազրույցին, ինչը Դատական դեպարտամենտի կողմից բացատրվել է նրանով, որ հոգեբանի մասնակցության պահանջն իմպերատիվ չէ, և յուրաքանչյուր դեպքում հոգեբանի ներգրավման անհրաժեշտությունը որոշվում է ԲԴԽ կողմից:[30]Նույն 108-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է հարցազրույցի նպատակը, ըստ որի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտում են հավակնորդի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով, սակայն միայն էթիկայի վերաբերյալ խնդրի և իրավական խնդրի մեկնաբանմամբ կարծում ենք, որ հնարավոր չէ բացահայտել թեկնածուի դատավոր դառնալու շարժառիթը և այլ անձնական հատկանիշներ:

[29] Տե՛ս ՀՀ Դատական օրենսգիրք հոդված 108, 1-ին մաս:
[30] Դեպարտամենտի պատասխան գրություն թիվ ԴԴ-1Ե-7672:

2.4 Հարցազրույց

Ըստ Դատական օրենսգրքի՝ հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան:

Հարցազրույցը կազմված է երեք մասից՝

- յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն, որը ներկայացնելու համար Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկը խորհրդում հանդես է գալիս որպես զեկուցող: Հավակնորդն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր անձնական գործում առկա տեղեկությունների վերաբերյալ: Դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ անձնական հմտություններն ու որակները գնահատելու նպատակով Բարձրագույն դատական խորհրդի անդամները կարող են հարցեր տալ հավակնորդին սույն հոդվածի 1-ին մասում նշված հատկանիշների, իսկ գիտությունների թեկնածու հավակնորդին՝ նաև նրա գիտական հետազոտությունների ոլորտի մասին.
- դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար.
- համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտություններն ու որակները գնահատելու համար:

Հարցերի ընտրությունը կատարվում է նախապատրաստված հարցերը վիճակահանությամբ հավակնորդի կողմից ընտրելու միջոցով: Հարցազրույցի փուլի ընթացքում էթիկայի խնդրի և իրավական խնդրին պատրաստվելու համար հավակնորդին տրամադրվում է 30 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկ ու կես ժամ է:[31]

3. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

3.1 Ընդհանուր տեղեկություններ գրավոր քննության վերաբերյալ

[31] Տե՛ս Դատական օրենսգիրք, հոդված 108:

Թեև հատուկ կարգով որակավորման ստուգումը դիտարկվել է որպես դատավորների թափուր հաստիքները համալրելու լրացուցիչ մեխանիզմ, արդեն իսկ դիտարկված պրակտիկան ցույց է տալիս, որ հատուկ կարգով որակավորման ստուգման մեխանիզմը կիրառվել է ավելի հաճախ, քան ընդհանուր ընթացակարգով որակավորման ստուգման ընթացակարգը: Այս համատեքստում հատուկ կարգով դատավորների թեկնածուների որակավորման ստուգման անցկացումը, ըստ ԲԴԽ անդամների, կիրառվել է դատական իշխանությունում առկա դատավորի մոտ 50 թափուր հաստիքները համալրելու համար, քանի որ հատուկ կարգով որակավորման ստուգման ներդրման նպատակն ինքնին թափուր հաստիքների արագ համալրումն է եղել, իսկ ընդհանուր ընթացակարգով համալրումը պահանջելու էր երկար ժամանակ՝ հաշվի առնելով Արդարադատության ակադեմիայում ուսումնառության տևողությունը:

2023 թվականի փետրվարից մինչև օգոստոս ամիսների ընթացքում կազմակերպված որակավորման քննությունների գերակշիռ մաս են կազմել հատուկ կարգով կազմակերպված որակավորման քննությունները: Մասնավորապես՝ հատուկ կարգով կազմակերպված որակավորման քննությունների թիվը կազմել է 7-ը (ըստ մասնագիտացումների), իսկ ընդհանուր կարգով քննությունների թիվը՝ 2-ը (ըստ մասնագիտացումների): [32]



[32] Տե՛ս Դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակների կազմման վերաբերյալ հայտարարությունները, https://court.am/hy/official-list-judge

2023 թվականին դիտարկված դատավորների թեկնածուների հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունները անց են կացվել Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում:

Գործընթացին, որպես պատասխանատու և կազմակերպիչ մասնակցել են Դատական դեպարտամենտի համապատասխան ներկայացուցիչներ, ներկա են եղել Արդարադատության նախարարության, հասարակական կազմակերպության, ինչպես նաև որոշ գրավոր քննություններին՝ Փաստաբանների պալատի ներկայացուցիչներ: Որակավորման քննությունների ողջ գործընթացը տեսանկարահանվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից և համապատասխան էկրանի միջոցով հնարավոր է եղել գործընթացին հետևել հարակից միջանցքից ևս:

Յուրաքանչյուր թեկնածուի տրամադրվել է ջուր, բաժակ: Թեկնածուներին տրվել են նաև սևագրեր, որոնք ավելացվել են՝ ըստ անհրաժեշտության: Թեկնածուներին թույլատրվել է իրենց լրացված սևագրերը վերցնել իրենց հետ՝ ըստ ցանկության: Քննության ավարտից հետո սեղանին դրված սևագրերը ոչնչացվել են:

Քննության ընթացքում թեկնածուներին անհրաժեշտության դեպքում քննասենյակից դուրս գալու համար թույլատրվել է դուրս գալ հսկիչների ուղեկցությամբ, որից առաջ թեկնածուների վկայականները և անձը հաստատող փաստաթղթերը հանձնվել են կարգադրիչներին:

Կազմակերպության կողմից դիտարկվել է քրեական, քաղաքացիական, ինչպես նաև վարչական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով անցկացված որակավորման քննությունները:

Քրեական մասնագիտացման բաժնի համալրման որակավորման ստուգման շրջանակներում Կազմակերպության կողմից դիտարկվել են.

- 2023 թվականի փետրվարի 2-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել է 7 հավակնորդ,[33]
- 2023 թվականի մարտի 13-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել է 17 հավակնորդ,[34]

[33] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները: https://court.am/hy/official-inner/367

[34] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները: https://court.am/hy/official-inner/390

- 2023 թվականի ապրիլի 13-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել է 19 հավակնորդ։[35]

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման որակավորման ստուգման շրջանակներում՝ Կազմակերպության կողմից դիտարկվել են.

- 2023 թվականի մարտի 15-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել է 18 հավակնորդ,[36]
- 2023 թվականի ապրիլի 14-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել է 10 հավակնորդ,[37]
- 2023 թվականի հունիսի 28-ին տեղի ունեցած հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությանը մասնակցել է 17 հավակնորդ։[38]

Անդրադառնալով վարչական մասնագիտացման բաժնին՝ դիտարկվել է 2023 թվականի մարտի 9-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել է 31 հավակնորդ։[39]

Այդպիսով, քրեական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման 3 գրավոր քննություններին միասին մասնակցել է 44 թեկնածու, քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման 3 գրավոր քննություններին միասին մասնակցել է 45 թեկնածու, իսկ վարչական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման 1 գրավոր քննությանը մասնակցել է 31 թեկնածու։

---

[35] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները։ https://court.am/hy/official-inner/416

[36] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները։ https://court.am/hy/official-inner/390

[37] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները։ https://court.am/hy/official-inner/416

[38] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները։ https://court.am/hy/official-inner/438

https://court.am/hy/official-inner/390

[39] Տե՛ս գրավոր քննության հավակնորդների թիվը և ստացված միավորների վերաբերյալ տեղեկությունները։

https://court.am/hy/official-inner/390



Հավակնորդները քննական սենյակում իրենց տեղերը զբաղեցրել են վիճակահանության միջոցով, ինչից հետո դատական դեպարտամենտի համապատասխան ներկայացուցիչը բոլոր մասնակիցներին ներկայացրել է որակավորման գրավոր քննության անցկացման կարգը, մեկնարկի համար սահմանված ժամանակը, ինչպես նաև էքզել ֆայլը, որի միջոցով մասնակիցների անվան դիմաց հայտնվում էր շտրիխ կոդեր։

Քննության ընդհանուր տևողությունը նախատեսված է եղել 5 ժամ՝ որից թեստային առաջադրանքների լուծման համար տրամադրվել է 2 ժամ, իսկ իրավական խնդիրներին պատասխանելու համար՝ 3 ժամ։

Քննական աշխատանքն ավարտելուց հետո դատական դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգվել են քննական աշխատանքները, այն մասով, որ ավելորդ նշումներ կամ տարբերվող նշաններ չլինեն աշխատանքում։ Լինելու դեպքում, այդ աշխատանքները հավակնորդների կողմից նույնությամբ արտագրվել են և նորից տպվել՝ անհրաժեշտության դեպքում կազմելով արձանագրություններ։ Իրավական խնդիրներին թեկնածուները պատասխանել են համակարգիչների միջոցով, որոնք ավարտելուց հետո Դեպարտամենտի աշխատակիցը ներբեռնել է համապատասխան կրիչի մեջ, ապա տպել։ Քննական աշխատանքները տպվելուց հետո Դեպարտամենտի աշխատակցի կողմից փակցվել

է հավակնորդի համար նախատեսված համապատասխան շտրիխ կոդը, ապա հավակնորդը ստորագրել է իր գրավոր աշխատանքի յուրաքանչյուր էջի ներքևի հատվածում և գցել այն համապատասխան արկղում։

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ սահմանված ժամանակի ավարտից հետո տեխնիկական աշխատանքներ կատարելու պատճառաբանությամբ որոշ թեկնածուներ իրավական խնդիրները ավարտել են մի քանի րոպե ուշացումներով։ Տեխնիկական աշխատանքները, ըստ թեկնածուների, եղել են տեղերի միջակայքը ուղղելը, տառաչափը և այլ տեխնիկական աշխատանքները շտկելը։ Մինչդեռ, քննական ժամանակի ավարտից հետո թեկնածուի կողմից քննական աշխատանքում գործողությունների կատարումը այլ նաև բովանդակային փոփոխություններ կատարելու հնարավորություն է առկա, ինչը նաև անհավասար պայմաններ է ստեղծում բոլոր հավակնորդների միջև։

Քննության ավարտին քննական արկղը զմրսվում էր, որը ստորագրվում էր քննությանը ներկա գտնված անձանց, այդ թվում՝ քննության ավարտին ներկա գտնված հավակնորդի կողմից։

3.2 Գրավոր քննության արդյունքների հրապարակումը

Որակավորման քննությունների արդյունքների հրապարակվել են տարբեր ժամանակահատվածներում՝ ըստ քննության հաջորդականության և մասնագիտացմումների։[40] Այսպես, 2023 թվականի փետրվարի 2-ին տեղի ունեցած քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 06.02.2023 թվականին՝ քննությունից 3 օր անց։

2023 թվականի մարտի 13-ին տեղի ունեցած քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացվելիք որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 17.03.2023 թվականին՝ քննությունից 5 օր անց։

[40] Տե՛ս արդյունքների և դրանց բողոքարկման վերաբերյալ տեղեկատվությունը ԲԴԽ կայքէջի համապատասխան բաժնում, https://court.am/hy/official-list-judge։

2023 թվականի ապրիլի 13-ին տեղի ունեցած քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 25.04.2023 թվականին՝ քննությունից 8 օր անց։

Ինչ վերաբերում է քաղաքացիական մասնագիտացման բաժնին, ապա 2023 թվականի մարտի 10-ին տեղի ունեցած քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 17.03.2023 թվականին՝ քննությունից 6 օր անց։

2023 թվականի ապրիլի 14-ին տեղի ունեցած քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 25.04.2023 թվականին՝ քննությունից 7 օր անց։

2023 թվականի հունիսի 28-ին տեղի ունեցած քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 07.07.2023 թվականին՝ քննությունից 7 օր անց։

Վարչական մասնագիտացման բաժնի՝ 2023 թվականի մարտի 9-ին տեղի ունեցած հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքները հրապարակվել են 17.03.2023 թվականին՝ քննությունից 7 օր անց։

Գրավոր քննության արդյունքների և ստացված միավորների անհամաձայնության առնչությամբ որոշ բողոքների դեպքում տեղի է ունեցել միավորների վերանայում։

Այսպես, քրեական մասնագիտացման բաժնի տարբեր ժամանակահատվածում տեղի ունեցած որակավորման 3 գրավոր քննության արդյունքները բողոքարկել է 7 հավակնորդներ, ինչի արդյունքում 6 հավակնորդների դեպքում տեղի է ունեցել արդյունքների վերանայում։ Բողոքարկման արդյունքներով 5 հավակնորդների միավորները բավարարել են նախատեսված անցողիկ շեմը։

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի 3 որակավորման գրավոր քննությունների շրջանակներում արդյունքները բողոքարկել են 10 հավակնորդներ, որի արդյունքում տեղի է ունեցել արդյունքների վերանայում միայն 7 հավակնորդների մոտ։ Բողոքարկման արդյունքներով 4 հավակնորդների միավորները բավարարել են նախատեսված անցողիկ շեմը։

Վարչական մասնագիտացման բաժնի գրավոր քննության արդյունքները բողոքարկել են 4 հավակնորդներ, որի արդյունքում 4 հավակնորդների միավորները վերանայվել են։

Բողոքարկման արդյունքներով 2 հավակնորդների միավորները բավարարել են նախատեսված անցողիկ շեմը։

Բարձրագույն դատական խորհրդի կողմից բողոքարկման փուլը անցնելուց հետո, հրապարակվել է հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միասնական համալրման ցուցակը, որից հետո հրապարակվել է հարցազրույցի ժամանակի մասին տեղեկատվություն։

Ինչ վերաբերում է հարցազրույցի փուլ անցած հավակնորդներին, ապա քրեական մասնագիտացման բաժնի որակավորման քննություններին մասնակցած 44 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 14 հավակնորդներ, համապատասխանաբար, փետրվարի 2-ի որակավորման գրավոր քննությանը մասնակցած 7 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 3 հավակնորդներ, իսկ մարտի 13-ին կայացած որակավորման գրավոր քննության 17 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 2-ը։ Համապատասխանաբար դիտարկվել է 2023 թվականի ապրիլի 13-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությունը, որին մասնակցել են 19 հավակնորդներ, որոնցից 9 հավակնորդներ անցել են հարցազրույցի փուլ։

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման 3 գրավոր քննություններին միասին մասնակցել են 45 հավակնորդներ, համապատասխանաբար 2023 թվականի մարտի 15-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությանը մասնակցած 18 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 2 հավակնորդներ։ Ինչ վերաբերում է 2023 թվականի ապրիլի 14-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությանը, ապա 10 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 3 հավակնորդներ։ Անդրադառնալով 2023 թվականի հունիսի 28-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությանը, ապա 17 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 4 հավակնորդներ։

Վարչական մասնագիտացման բաժնի 2023 թվականի մարտի 9-ին անցկացված հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննությանը մասնակցած 31 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել 6 հավակնորդներ։ [41]

[41] Տե՛ս հարցազրույցի փուլ անցած հավակնորդների վերաբերյալ տեղեկատվությունները ԲԴԽ կայքէջի համապատասխան բաժնում։
https://court.am/hy/official-list-judge



4.ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

4.1 Ընդհանուր տեղեկությունների հարցազրույցի փուլի վերաբերյալ

Դատավորների թեկնածուների որակավորման ստուգման գրավոր քննությանը հաջորդում է բանավոր հարցազրույցի փուլը, որին մասնակցում են գրավոր փուլը հաղթահարած հավակնորդները։

Կազմակերպության կողմից դիտարկվել են քրեական մասնագիտացման բաժնի հարցազրույցները, որոնք տեղի են ունեցել, համապատասխանաբար, 2023 թվականի մարտի 16-ին, ապա 2023 թվականի ապրիլի 25-ին, ինչպես նաև 2023 թվականի հունիսի 22-ին։ Դիտարկվել են նաև քաղաքացիական մասնագիտացման բաժինների հարցազրույցները, որոնք տեղի են ունեցել, համապատասխանաբար, 2023 թվականի ապրիլի 25-ին, նույն

թվականի հունիսի 22-ին և նույն թվականի օգոստոսի 28-ին, իսկ վարչական մասնագիտացման բաժնինը՝ նույն թվականի ապրիլի 25-ին։

Համաձայն Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը։

Հարցազրույցի փուլի ընթացքում յուրաքանչյուր հավակնորդ վիճակահանությամբ վերցնում է վարքագծի կանոնի և իրավական խնդրի մեկ օրինակ, այնուհետև պատրաստվում՝ 30 րոպե, սակայն շուտ պատրաստվելու դեպքում թեկնածուները հնարավորություն ունեին հարցազրույցին մասնակցել ավելի շուտ։ Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է։[42]

Եղել են դեպքեր, երբ քննասենյակում հավակնորդների թիվը եղել է 10-ը, ինչը հավելյալ պատրաստվելու ժամանակ է ժամանակ է տրամադրում հավակնորդներին՝ ըստ հերթականության։

Մասնավորապես, յուրաքանչյուր հավակնորդի հետ տարվող հարցազրույցի սկզբում ԲԴԽ անդամներից մեկը ներկայացրել է տվյալ հավակնորդի ինքնակենսագրականը, ինչին հաջորդել է ներկայացված տեղեկությունների վերաբերյալ հարց ու պատասխան և/կամ ճշտումներ՝ ըստ անհրաժեշտության։ Հարցազրույցների ընթացքում որոշ դեպքերում առանձին քննարկման առարկա են հանդիսացել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված եզրակացություններին առնչվող հարցերը։ Հարցազրույցի ընթացքում, հավակնորդի համաձայնության դեպքում Խորհրդի կողմից տրվել է ԿԿՀ եզրակացության առնչությամբ հարցեր։

Դրան հաջորդել են վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդիրները ինչպես նաև համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ խնդիրները, որոնց հավակնորդը պատասխանում է հարցազրույցի ընթացքում։

Որոշ դեպքերում, սակայն, հարցազրույցի ընթացքում խնդիր-առաջադրանքները չեն բարձրաձայնվել հավակնորդների կողմից, այլ միայն վերջիններիս կողմից ներկայացվել են դրանց պատասխանները, ինչը խնդիր է՝ թափանցիկության տեսանկյունից, քանի որ և հավակնորդը, և ԲԴԽ անդամները տիրապետում են խնդիր-առաջադրանքների

[42] Տե՛ս Դատական օրենսգիրք, հոդված 108։

բովանդակությանը, սակայն դիտորդին պարզ չէ խնդրի բովանդակությունը, որին տրվում է պատասխանը:

Բարեվարքության ստուգման վերաբերյալ Խորհրդի հարցադրումները հիմնականում վերաբերել են թեկնածուի անձի, ֆինանսական դրությանն ու միջոցներին, անձնական այլ տվյալներին, որոնք Հանձնաժողովի կողմից խնդրահարույց են դիտարկվել: Նման իրավիճակներից է, օրինակ, թեկնածուի ֆինանսական գործարքները, ինչի առնչությամբ Խորհրդի մոտ առաջացել են հարցեր:

Մեկ այլ թեկնածուի բարեվարքությանն առնչվող հարցերից է եղել իր և ամուսնու եկամուտները, մասնավորապես՝ եկամուտները և վերջիններիս կատարած ծախսերը չեն համապատասխանել:

Մեկ թեկնածուի բարեվարքությանն առնչվող հարցերից է եղել թեկնածուի գույքի ծագման վերաբերյալ հարցադրումները: Ինչպես նաև թեկնածուի եկամուտների ներկայացման մասով եղել է տեխնիկական սխալ:

Մեկ այլ թեկնածուի բարեվարքությանն է առնչվել թեկնածուի և ընտանիքի եկամուտները, ինչպես նաև այն, որ ընտանիքի անդամը ներգրավված է եղել քրեական վարույթում, որի արդյունքում արդարացվել է: Անդրադարձ է կատարվել նաև թեկնածուի որդու՝ վարչական դատարանի դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված լինելուն:

Հաջորդ թեկնածուի բարեվարքությանն է առնչվել թեկնածուի մասնակցությամբ վթարի վերաբերյալ հարցադրումներ, քաղաքական հայացքների, այդ թվում՝ քաղաքական կուսակցությանը պատկանելիության (Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն) առնչվող հարցեր ինչպես նաև աշխատանքի հետ կապված հարցադրումեր:

4.2 Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատումը

Հավակնորդների հարցազրույցների ավարտից հետո ԲԴԽ անդամներն իրականացնում են հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում, որին հաջորդում է քվեարկությունը: Ըստ Դատական օրենսգրքի՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը: [43] Թեկնածուների վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդակցական սենյակում: Քվեարկությանը Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»: Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ:[44]

Այսպիսիով, 29 հավակնորդներից հարցազրույցի փուլը հաղթահարել են 28 հավակնորդներ: Մեկ հավակնորդը, ով չի հաղթահարել հարցազրույցի փուլը, ներգրավված է եղել վարչական մասնագիտացման բաժնում:



4.3 Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն

[43] Տե՛ս Դատական օրենսգիրք հոդված 108:
[44] Տե՛ս Դատական օրենսգիրք, հոդված 109:

Բարեվարքության եզրակացության վերաբերյալ տրված եզրակացությունն ունի խորհրդատվական բնույթ, դրանք Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարող են մեկնաբանվել և օգտագործվել ըստ հայեցողության, ինչը էական ազդեցություն է թողնում վերջնական որոշման վրա: Օրինակ, հարցազրույցի դիտարկման փուլից պարզ է դարձել, որ առանձին դեպքերում, Հանձնաժողովի կողմից բարձրացված են եղել խնդրահարույց հարցեր ու մտահոգություններ թեկնածուի բարեվարքության թերթիկի վերաբերյալ, սակայն թեկնածուն Խորհրդի վերջնական որոշմամբ ներառվել է դատավորների թեկնածուների ցուցակում:

Կազմակերպությունը հարցում է ներկայացրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որով խնդրել է տրամադրել տեղեկություն, թե յուրաքանչյուր որակավորման ստուգման արդյունքում հարցազրույցի փուլն անցած թեկնածուներից քանի՞սի վերաբերյալ է Հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը եղել «դրական», «դրական վերապահումով», և քանիսի՞նը «բացասական»՝ ըստ մասնագիտացման՝ առանց անձնական տվյալների ներկայացման: Ի պատասխան հարցմանը՝ ԿԿՀ-ն տրամադրել է տեղեկություն ըստ մասնագիտացումների՝ առանց անձնական տվյալների ներկայացման, համաձայն որի՝ քրեական մասնագիտացման բաժնի 14 թեկնածուներից 12-ին ԿԿՀ-ն տրամադրել է դրական եզրակացություն, 1 դեպքում դրական վերապահումով, որի համար հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, 1 թեկնածուի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն, որի համար հիմք են հանդիսացել թեկնածուի բարեվարքությունը գույքային դրության, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության, ինչպես նաև բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության համատեքստում:

Անդրադառնալով քաղաքացիական մասնագիտացման բաժնին՝ 9-ը թեկնածուից 4-ին տրամադրվել է դրական եզրակացություն, 3-ի դեպքում՝ դրական վերապահումով, որոնց համար հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, մեկ թեկնածուի դեպքում բարեվարքությունը կարգապահական և վարչական պատասխանատվության ենթարկված լինելու համատեքստում: 2 թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ կողմից տրամադրվել է բացասական

եզրակացություններ, որոնցից մեկի համար հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունը, մյուս դեպքում՝ թեկնածուի բարեվարքությունը՝ վերջինիս կողմից աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի համատեքստում:

Ինչ վերաբերում է վարչական մասնագիտացված բաժնին՝ ապա 5 թեկնածուից 3-ին ԿԿՀ-ն տրամադրել է դրական եզրակացություն, 2-ին՝ դրական վերապահումով, որոնց համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:



Հատկանշական է, սակայն, որ ԿԿՀ-ի կողմից տրամադրված բացասական եզրակացություն ստացած թեկնածուները, այնուհանդերձ, ԲԴԽ-ի կողմից ներառվել են դատավորների ընտրության և նշանակման կազմը հաստատելու մասին ցուցակում: Այդուհանդերձ արձանագրվել է դեպք, երբ Հանրապետության նախագահը չի ստորագրել դատավորի նշանակման հրամանագիրը՝ Բարձրագույն դատական խորհրդին ներկայացնելով առարկություններ: Բարձրագույն դատական խորհրդի կողմից առարկությունները չեն ընդունվել, որից հետո Խորհուրդը կրկին Հանրապետության Նախագահի քննարկմանն է ներկայացրել դատավորի նշանակման վերաբերյալ առաջարկությունը: Որոշման վերաբերյալ Հանրապետության նախագահի կողմից հրամանագիր չի ընդունվել և համապատասխան

դիմում չի ներկայացվել Սահմանադրական դատարան, որի արդյունքում անձը դատավորի պաշտոնում նշանակվել է իրավունքի ուժով:[45]

5. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որակավորման ստուգումը հաղթահարած դատավորների թեկնածուների հավակնորդների տարիքային նվազագույն շեմը կազմել է 26-ը, իսկ ամենաբարձր շեմը 56-ը:



Կազմակերպության կողմից ուսումնասիրվել են նաև հարցազրույցի փուլը հաղթահարած, դատավորի պաշտոնում ինչպես նշանակված, այնպես էլ դեռևս չնշանակված դատավորի 28 թեկնածուների՝ նախքան դատավորի պաշտոնի ստանձնումը զբաղեցրած պաշտոնները և իրականացրած գործունեությունը: Այսպես, հավակնորդներից 14-ը եղել են քրեական մասնագիտացման բաժնից, 9-ը՝ քաղաքացիական, համապատասխանաբար 5 հավակնորդներ՝ վարչական մասնագիտացման բաժնից:

[45] Տե՛ս դատավորի նշանակման վերաբերյալ տեղեկատվությունը:
https://court.am/storage/uploads/files/bdx-president-announcements/QnZ8mcC87j3liJ0C7fOUwP6RORdQbRC9X13gQXMr.pdf

Անդրադառնալով քրեական մասնագիտացման բաժիններում ընդգրկված թեկնածուներին՝

- 4-ը ունեցել են ռեզերվային դատավորի կարգավիճակ,
- 4-ը եղել են դատավորի օգնականներ՝ համապատասխանաբար աշխատելով Շիրակի մարզի, Կոտայքի մարզի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատում:
- 2-ը զբաղեցրել են խորհրդականի պաշտոն. հավակնորդներից մեկը համապատասխանաբար, զբաղեցրել է ԲԴԽ նախագահի խորհրդականի պաշտոնը, մյուս հավակնորդը զբաղեցրել է ԲԴԽ նախագահի՝ որպես Արդարադատության նախարար պաշտոնավարելիս խորհրդականի պաշտոնը: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ ԲԴԽ նախագահը չի մասնակցել վերջիններիս քվեարկությանը՝ հայտնելով ինքնաբացարկ: Հարցազրույցի փուլի ընթացքում պարզ է դարձել նաև, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նույնպես իր եզրակացությամբ անդրադարձել էր այդ հարցին:
- 1-ը աշխատել է Արմավիրի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:
- 1-ը աշխատել է Հակակոռուպցիոն կոմիտեում հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:
- 1-ը հանդիսացել է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:
- 1-ը զբաղեցրել է վարչության պետի պաշտոնը Արդարադատության նախարարությունում:

Անդրադառնալով քաղաքացիական մասնագիտացման բաժիններում ընգրկված թեկնածուներին՝

- 1-ը աշխատել է Դատական դեպարտամենտում՝ որպես վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,
- 1-ը հանդիսացել է Սնանկության դատարանի դատավորի օգնական,
- 1-ը զբաղեցրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի գրասենյակի պետի պաշտոնը,
- 1-ը աշխատել է բանկում՝ որպես դատահիրավական բաժնի գլխավոր մասնագետ,

- 1-ը զբաղեցրել է մարզպետի տեղակալի պաշտոնը,
- 1-ը հանդիսացել է «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ, թիմի ղեկավար՝ քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումների մասով,
- 1-ը հանդիսացել է փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն,
- 1-ը հանդիսացել է ՀՀ փաստաբանական պալատի անդամ, փաստաբան,
- 1-ը աշխատել է ՍՊԸ-ում որպես իրավաբան,

Անդրադառնալով վարչական մասնագիտացման բաժիններում ընգրկված թեկնածուներին՝

- 3-ը աշխատել են որպես դատավորի օգնականներ, 2-ը՝ Վճռաբեկ դատարանի վարչական պալատում, 1-ը՝ Վարչական վերաքննիչ դատարանում: Թեկնածուներից 2-ը աշխատել են ՍՊԸ-ներում՝ որպես իրավական խորհրդատու, իրավաբան:



Հատկանշական է, որ վարչական մասնագիտացման բաժնից նշանակվել են դատավորներ, ովքեր նախկինում զբաղեցրել են դատավորի օգնականի պաշտոնը:

6. ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Այսպիսով հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուներից դատավորի պաշտոնում նշանակվել են 28 թեկնածուներից 24-ը։

Նշանակված դատավորները պաշտոններ են ստանձնել, համապատասխանաբար, նշանակվելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, Սևանկության դատարանում, Արարատի և Վայոց ձորի մարզերի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Տավուշի, ինչպես նաև Սյունիքի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում։ Թեկնածուներից 3-ը նշանակվել են Վարչական դատարանում՝ համապատասխանաբար նշանակվելով՝ Շիրակի, Սյունիքի և Լոռու մարզերում։ Դատավորների 28 թեկնածուներից 4-ը չեն նշանակվել՝ 2-ը՝ քրեական մասնագիտացման բաժնից, մյուս 2-ը՝ վարչական մասնագիտացման բաժնից։



Հատկանշական է, որ եղել են դեպքեր, երբ դատավորները նշանակումից կարճ ժամանակ անց տեղափոխվել են այլ դատարաններ։ Մասնավորապես դատավորներից մեկը Երևան քաղաքի դատարանից տեղափոխվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարան, մյուսը՝ Մնանկության դատարանից տեղափոխվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հատուկ կարգով որակավորման ստուգման գործընթացի ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը և արդեն գործնականում անցկացված որակավորման ստուգումների դիտարկումը թույլ է տալիս հանգել այն եզրահանգման, որ ներդրված ամբողջությամբ նոր կարգավորումներով որակավորման ստուգումների կազմակերպումը խնդրահարույց է մի շարք պատճառներով.

- Դատավորների թեկնածուների որակավորման ստուգման հատուկ կարգի ներդրումն իրականացվել է առանց որևէ հանրային քննարկման։ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը հանրային քննարկման ներկայացված տարբերակում չի պարունակել «Հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելը և դատավորների թեկնածուների ցուցակում հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին ընդգրկելը» վերտառությամբ հոդվածի նախագծային դրույթը։ Լրացումը կատարվել է Ազգային ժողովում, որտեղ չի ապահովվում օրենսդրական նախագծերի հանրային քննարկում։
- Օրենսդրության փոփոխությամբ նախատեսվել է, որ անձն ընդգրկվում է դատավորների թեկնածուների ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու։Ավելին, արդեն իսկ անցկացված որակավորման ստուգումների դիտարկումը բավարար տվյալներ չի տալիս այն մասին, որ հատուկ կարգով քննությունները իրապես բնույթով բարդ են և քննությունները հաղթահարած թեկնածուների նշանակումը դատավորի պաշտոնում առանց Արդարադատության ակադեմիայում ուսումնառության հիմնավորված է։ Ավելին, հատուկ կարգով որակավորման ստուգման շրջանակներում չեն փոփոխվել դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջները։
- Հատուկ կարգով որակավորման ստուգումը լինելով լրացուցիչ գործիքակազմ՝ գործարկվել է առավել հաճախ, քան ընդհանուր ընթացակարգով որակավորման

ստուգումները։ Մասնավորապես, 2023թ. հատուկ ընթացակարգով անց է կացվել յոթը որակավորման ստուգում, մինչդեռ ընդհանուր ընթացակարգով միայն երկուսը։

- Դատական օրենսգրքի փոփոխությամբ դատավորների որակավորման ստուգման շրջանակներում թեկնածուների հոգեբանական թեստավորման փուլը վերացվեց, ինչպես նաև դիտարկված բոլոր դեպքերում հարցազրույցի փուլում ներգրավված չէր հոգեբան։ Հոգեբանական թեստավորման փուլի արդյունքները և հարցազրույցին ներգրավված հոգեբանի կարծիքը, թեև խորհրդատվական նշանակություն ունեն, սակայն որոշիչ նշանակություն ունեն Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից թեկնածուների ոչ մասնագիտական հատկանիշների գնահատման համար:
- Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ գրավոր քննության արդյունքների բողոքարկման՝ Դատական օրենսգրքով սահմանված տասնհինգօրյա ժամկետը կրճատվել է՝ սահմանելով հնգօրյա ժամկետ:
- Հատուկ կարգով որակավորման ստուգման գրավոր քննության գնահատման հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկված են Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան մասնագիտացման մեկ անդամ, Դատական դեպարտամենտի և Արդարադատության նախարարության մեկական ներկայացուցիչներ, ինչը ևս հակասում է Դատական օրենսգրքի կարգավորմանը, ըստ որի՝ գնահատման հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկված են համապատասխան մասնագիտացում ունեցող հինգ դատավոր և երկու իրավաբան անդամ։ Հաշվի առնելով հատուկ կարգով դատավորների թեկնածուների որակավորման ստուգման գրավոր քննության խնդիրների ենթադրյալ բարդությունը և քանակը, գնահատման հանձնաժողովը չի կարող բաղկացած լինել դատական գործունեության փորձառություն չունեցող անձանցից, այն դեպքում, երբ ընդհանուր կարգով որակավորման ստուգման գրավոր քննության գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկված են համապատասխան մասնագիտացում ունեցող հինգ դատավոր և իրավունքի համապատասխան բնագավառի երկու իրավաբան գիտնական։
- Որակավորման ստուգման մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ գրավոր քննության սահմանված ժամանակի ավարտից հետո տեխնիկական աշխատանքներ կատարելու պատճառաբանությամբ որոշ հավակնորդներ իրավական խնդիրները ավարտել են մի քանի րոպե ուշացումներով, սակայն հնարավոր է նաև բովանդակային

փոփոխություններ կատարել, ինչը անհավասար պայմաններ է ստեղծում բոլոր հավակնորդների միջև:

- Որակավորման քննության հարցազրույցի փուլի ընթացքում, որոշ դեպքերում խնդիր-առաջադրանքները չեն բարձրաձայնվել հավակնորդների կողմից, այլ միայն ներկայացվել են դրանց պատասխանները, ինչը հնարավորություն չի տվել դիտորդին և մյուս ունկնդիրներին ըմբռնել խնդրի բովանդակությունը և տրված պատասխանը:
- Հարցազրույցի փուլի շրջանակներում բարեվարքության ստուգման վերաբերյալ Խորհրդի հարցադրումները հիմնականում վերաբերել են թեկնածուների անձի, ֆինանսական դրությանն ու միջոցներին, անձնական այլ տվյալների, որոնք Հանձնաժողովի կողմից խնդրահարույց են դիտարկվել:
- Որակավորման ստուգման հատուկ ընթացակարգով ընտրվել են 28 դատավորի թեկնածուներ, որոնցից երեքը ստացել են բացասական բարեվարքության եզրակացություն: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ քրեական մասնագիտացման բաժնի ընտրված 14 դատավորի թեկնածուներից 12-ին ԿԿՀ-ը տրամադրել է դրական եզրակացություն, 1 թեկնածուի վերաբերյալ դրական վերապահումով, որի համար հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, 1 թեկնածուի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն, որի համար հիմք են հանդիսացել թեկնածուի բարեվարքությունը, գույքային դրության, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության, ինչպես նաև բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության համատեքստում:

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի 9-ը թեկնածուից 4-ին տրամադրվել է դրական եզրակացություն, 3-ի դեպքում՝ դրական վերապահումով, որոնց համար հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, մեկ թեկնածուի դեպքում բարեվարքությունը կարգապահական և վարչական պատասխանատվության ենթարկված լինելու համատեքստում: Բացասական եզրակացությունների թիվը եղել է 2-ը: Մեկ թեկնածուի դեպքում բացասական եզրակացության հիմք է հանդիսացել վերջինիս գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունը, մյուսի դեպքում՝

բարեվարքությունը՝ վերջինիս կողմից աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի համատեքստում։

Վարչական մասնագիտացված 5 թեկնածուից 3-ին ԿԿՀ-ն տրամադրել է դրական եզրակացություն, 2-ին՝ դրական վերապահումում, որոնց համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները։

- Ուսումնասիրության հիման վրա արձանագրվել է, որ դատավորների 28 թեկնածուներից 24-ը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշանակվել են դատավորի պաշտոնում: 4 թեկնածուներ չեն նշանակվել. 2-ը քրեական մասնագիտացման բաժնից, մյուս 2-ը՝ վարչական մասնագիտացման բաժնից։ Հատկանշական է, որ վարչական մասնագիտացման բաժնից նշանակվել են դատավորներ, ովքեր նախկինում զբաղեցրել են դատավորի օգնականի պաշտոնը։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերացնել հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացման ընթացակարգը՝ ապահովելով դատավորների թեկնածուների կողմից Արդարադատության ակադեմիայում պարտադիր ուսուցման պահանջը։
2. Որակավորման գրավոր քննության փուլում համակարգիչները ծրագրավորել այնպես, որպեսզի քննության համար նախատեսված ժամանակը ավարտվելուն պես համակարգիչներն ինքնաբերաբար անջատվեն, ինչը կբացառի թեկնածուների անհավասար վիճակում հայտնվելն ու ժամանակի ավարտից հետո աշխատանքը շարունակելու հնարավորությունը։
3. Վերականգնել դատավորների թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման փուլը՝ ապահովելով նրանց էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը և արժեքային համակարգը գնահատելու արդյունավետ մեթոդաբանություն և կարգ։
4. Պրակտիկայում ապահովել հարցազրույցի փուլին հոգեբանի արդյունավետ ներգրավվածությունը, սահմանել հոգեբանի վարձատրության չափն ու շրջանակը։
5. Ապահովել որակավորման ստուգման գործընթացի վերաբերյալ, ներառյալ՝ դրա կազմակերպման և իրականացման ձևի ու կարգի, կառուցվածքի, բովանդակության և

գնահատման վերաբերյալ Դատական օրենսգրքի կարգավորումների պահպանումը պրակտիկայում և բացառել Բարձրագույն դատական խորհրդի կողմից այդ կարգավորումներին հակասող կարգավորումների սահմանումը:

6. Օրենսդրությամբ նախատեսել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվող բարեվարքության գնահատման եզրակացությունների հրապարակայնությունը:

7. Օրենսդրությամբ նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման որոշումների հրապարակայնությունը և հիմնավորվածությունը, հատկապես բարեվարքության «բացասական» և «դրական վերապահումով» գնահատման եզրակացություն ստացած դատավորների թեկնածուների ընտրության և համապատասխան ցուցակներում ընդգրկելու որոշումների հիմնավորվածությունը և հրապարակայնությունը: